

## Կարծիք

Արա Զարգարյանի «Նախատիպի գեղարվեստականացման սկզբունքները Եղիշե Չարենցի պոեզիայում» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

Արա Զարգարյանի «Նախատիպի գեղարվեստականացման սկզբունքները Եղիշե Չարենցի պոեզիայում» ատենախոսության նպատակը, ինչպես սեղմագրում նշում է, քննելն է Եղիշե Չարենցի պոեզիայում նախատիպի գեղարվեստականացման սկզբունքները: Հեղինակը փորձ է կատարել ցույց տալ մի շարք նախատիպերի գեղարվեստականացման սկզբունքները, գեղարվեստականացման սկզբունքի մեջ գործերի դասակարգումը: Ցույց է տրվել նաև Չարենց-նախատիպ կապը տարբեր ժամանակներում: Քննության համար հիմք են հանդիսացել Չարենցի պոեզիան, արձակը, օրագրային գրառումները, նամակները, հուշերն ու անգամ սեփական գրքերում կատարված նշումները: Քննվել է նաև մի շարք գործերում առկա աստվածաշնչյան միստերիայի ուղղակի ազդեցությունը, որով էլ կառուցվել են նախատիպերի ընթերցման սկզբունքները: Ուսումնասիրության մեջ ներկայացված է ստեղծագործության երկշերտ ընթերցանությունը. նախ որպես ուղիղ տեքստ, զրույց նախատիպի հետ կամ նախատիպի մասին, հետո՝ տեքստի ներքին բովանդակության, գաղափարախոսության վերլուծություն, դուրսբերում: Տարված են զուգահեռներ Չարենցի կողմից նույն նախատիպի տարածմանակյա ընկալումների հետ, որով և պայմանավորված նախատիպի ընկալումը մեկ փոխվում է, մեկ մնում նույնը՝ հաստատուն: Չարենցի ստեղծագործություններում ներկայացվել են նույն նախատիպի գեղարվեստականացման ընթերցումները բանաստեղծի և օտարազգի ու հատկապես ռուս հեղինակների գործերում: Այստեղ արտացոլվում են ընկալումների, սիմվոլների նմանությունն ու տարբերությունը:

Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի թեմային վերաբերող գրականությունը, հոդվածները, Չարենցի ստեղծագործություններին վերաբերող վերլուծական աշխատությունները: Այստեղ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակ, նպատակի իրագործման հիմնախնդիրները, գիտական նորույթն ու մեթոդաբանությունը:

Առաջին՝ «Աստվածաշնչյան պատգամի սինթեզը Կոմիտասին» գլխի ենթագլուխներում (1.1, 1.2) ուսումնասիրվել են Կոմիտասի մասին մի շարք ստեղծագործություններ: Հատկապես ուշադրության կենտրոնում է «Կոմիտաս» և «Requiem Aeternam Կոմիտասի հիշատակին» ստեղծագործությունները: Քննության

արդյունքում ներկայացվել է սկզբունքը, դրան համապատասխան ստեղծագործությունները, ինչպես նաև Կոմիտասի նախատիպի չարենցյան ընկալումները: Զուգահեռաբար ներկայացվել է աստվածաշնչյան Ղազարոսի հարության միստերիան: Այն քննվում է աստվածաբանական մի շարք վերլուծություններով, հատկապես՝ Ռուդոլֆ Շտայների միստերիայի գաղափարական հենքի ուսումնասիրությամբ: Չարենցի պոետիկ համակարգից դուրս է բերվում Քրիստոս-գերագույն արժեք գաղափարը, որով վերլուծվում են Կոմիտասի մասին Չարենցի մի շարք ստեղծագործություններ: Սահմանվում է նախատիպի գեղարվեստականացման սկզբունքը, և այդ հենքի վրա ներկայացվում առաջին գլուխը:

Երկրորդ՝ «Միֆը, առասպելը և միստերիան նախատիպի ընթերցման սկզբնակետ» գլխի ենթագլուխներում (2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5) ուսումնասիրվել են համապատասխան նախատիպերի մասին ստեղծագործությունները: Ըստ այդմ՝ նախատիպի գեղարվեստականացման հիմքում կանգնում է միֆը, առասպելը կամ միֆական երանգ ստացած ժամանակի գեղարվեստական նորույթ-թեման: Անդրադարձ է կատարվել ԽՍՀՄ առաջնորդներ Վլադիմիր Իլյիչ Լենինի, Իոսիֆ Ստալինի և Խոբիդոյանի Հայաստանի ղեկավար Ադասի Խանջյանին: Ներկայացվում է նաև Սյանիկյանը, Ամատունին, Արիսյանը, այդ շրջանի այլ քաղաքական, կուսակցական գործիչներ և քննադատներ: Լենինի նախատիպի դեպքում քննության է առնվել հատկապես «Ես և Իլյիչը» պոեմը: Ներկայացված են ստեղծագործության հիմքերը՝ Հերբերտ Ուելսի «Ժամանակի մեքենա» և «Մարդկության համառոտ պատմություն» գրքերը: Ադասի Խանջյանի դեպքում դիտարկվել են Չարենցի գրեթե բոլոր գործերը, սակայն ուշադրության կենտրոնում «Դոֆինը Նաիրական» սոնետների շարքն է, որը բխում է նախատիպի գեղարվեստականացման սկզբունքից: Նշվում է, որ Խանջյանի դեպքում գործում է «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը: Ստալինի նախատիպի դեպքում հղում է կատարվում դիցաբանական, առասպելաբանական և հինկտակարանյան պատմություններին: Հարություն են առնում տարբեր ժամանակաշրջանում չարիքը մարմնավորող կերպարները: Իոսիֆ Ստալինի դեպքում Ստալինի մասին գրված բանաստեղծությունների, պոեմների, էպիգրամների շարքում առենախոսության հեղինակի կողմից քննության հիմնական նյութ է հանդիսացել «Նզովք» ստեղծագործությունը:

Երրորդ՝ «Կինը՝ երկու աշխարհների անցումային կետ» գլխի ենթագլուխներում (3.1, 3.2, 3.3) ներկայացվում են Չարենցի «կանանց» նախատիպերը: Քննության են առնված հատկապես Արուս Ոսկանյանի, Արփենիկի և Մազդայի

նախատիպի մասին ստեղծագործությունները: Ատենախոսը նշում է, որ այս գլխում գեղարվեստականացման սկզբունքի հիմքում կանգնում է կինը՝ չարենցյան ուրույն ընկալումներով: Կինը Չարենցի համար դառնում է անցումային կետ՝ երկու աշխարհների սահմանագծին կանգնած հոգի, որը կյանքի տարբեր փուլերում ուղեկցում է բանաստեղծին: Ըստ հեղինակի՝ կանանց նախատիպերի գեղարվեստականացման հիմքը Պլատոնի «Խնջույքը» աշխատությունն է, և դանթեական սիրո հավիտենական գաղափարը: Դանթեական բանաձևով Արուս Ոսկանյանը և Արփենիկ Չարենցը դառնում են երկու ուղեկիցներ դեպի այնկողմնային աշխարհը: Նշվում է նաև, որ Մագդան դառնում է Գյոթեի ֆաուստյան բանաձևումի կրողը՝ կյանքի վերածննդի խորհրդանիշը:

Եզրակացություններում ձևակերպված են ատենախոսության հիմնական արդյունքները:

Սեղմագիրը արտացոլում է ատենախոսության ընդհանուր բնութագիրը, նպատակը, հիմնախնդիրները, գիտական նորույթը, մեթոդական հիմքերը, կառուցվածքը:

Ատենախոսության լավ հատվածներից է հատկապես «Կոմիտասի տառապանքի ուղին և Ղազարոսի հարության միստերիան»՝ 1.1 ենթագլուխը (էջ 18-42): Այդ ենթագլխում ատենախոսը Կոմիտասի նախատիպի մասին Չարենցի մի շարք ստեղծագործությունները վերլուծում է նորովի, և վերլուծության բանալի է դառնում հատկապես Ռուդոլֆ Շտայների քրիստոնեության մասին գրված աշխատությունը: Չարենցի «Կոմիտաս» պոեմը և մնացյալ ստեղծագործությունները Ռուդոլֆ Շտայների աշխատություններում առկա «բանաձևերով» վերլուծելու համար ատենախոսը բերում է մեկ փաստ Չարենցի կենսագրությունից, որը բանալի է դառնում ստեղծագործությունների վերլուծության համար: 1917 թվականին Չարենցի կողմից Շտայների «Քրիստոնեությունը որպես միստիկական փաստ և հին աշխարհի միստերիաները» գրքի ընթերցանությունն ու ազդեցությունը բանաստեղծի ստեղծագործական ներաշխարհի վրա կարևոր են վերլուծական գործիքակազմ ընտրելու տեսանկյունից: Ատենախոսը մի շարք դեպքերում նշում է նաև այլ հեղինակների, գրքերի ազդեցությունները Չարենցի հոգևոր և մտավոր աշխարհի վրա: Այդպիսի հեղինակներից են հատկապես Դանթեն, Բոլեսլավ Պրուսը, Պլատոնը, Կամիլ Ֆլամարիոն, Զիգմունդ Ֆրոյդը, Էդգար Պոն, Հերբերտ Ուելսը և այլն: Այս հեղինակներն ու իրենց գրքերը մեծ ազդեցություն են թողել Չարենցի ստեղծագործական ներաշխարհի վրա, որն ատենախոսը ընդգծում է հատկապես առաջին՝ «Աստվածաշնչյան պատգամի սինթեզը» գլխի (էջ 18-42), 2.1 ենթագլխում՝

«Ուելսի և Ֆլամարիոնի միջակա գաղափարները Լենինի նախատիպի գեղարվեստականացման հիմքում» (էջ 49-65), 2.5 ենթագլխում՝ «Հնագույն միջից և միստերիաներից Նեո-Ստալին համակարգի դուրսբերումը» (էջ 86-113) և 3.2, 3.3 ենթագլուխներում՝ «Արուս Ոսկանյանի արխետիպի ընթերցումը սիրո դանթեական համակարգում» (էջ 132-145) և «Մագդան՝ անցումային անդառնալի կետ, կյանքի վերանորոգման խորհրդանիշ» (էջ 145-150):

Ատենախոսության լավագույն հատվածներից է հատկապես 2.5 ենթագլուխը՝ «Հնագույն միջից և միստերիաներից Նեո-Ստալին համակարգի դուրսբերումը» (էջ 86-113): Այս ենթագլխում Ստալինի նախատիպի մասին գրված Չարենցի մի շարք ստեղծագործություններ վերլուծվում են նոր մոտեցմամբ: Ատենախոսը հատկապես հետաքրքիր նորույթ է բերում, երբ Ղևոնդ Ալիշանի «Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը» գրքի օգնությամբ վերլուծում է «DE PROFUNIDS» գրառումը, որում Չարենցը ներկայացնում է «Անվերնագիր պոեմի» սևագիր տարբերակներ, մաքրագրություններ, Ստալինին նվիրված բանաստեղծական տողերի տարբերակներ, ինչպես նաև հայոց և լատինական այբուբենով կազմված գաղտնագրեր: Ցույց է տրվում, որ Չարենցի կողմից Ստալինին ոչնչացնելու տարբերակ էր նաև թուղթ ու գրի հնագույն ավանդույթը, որի մասին մանրամասն նշվում է հատկապես Ալիշանի մասին աշխատությունում:

Ընդդիմախոսության շրջանակներում բնականաբար կատարվել են մի քանի դիտարկումներ, որոնք կարող են օգտակար լինել ատենախոսի հետագա հետազոտական գործունեության համար:

Խոսելով Չարենցի նախատիպերի մասին՝ հարկ է ընդգծել, որ ատենախոսության մեջ չկա անդրադարձ «Մահվան տեսիլ» ստեղծագործությանը, որում առկա է նախատիպերի մի ամբողջ շարք: Այդ պոեմն իր գաղափարով, նախատիպի գեղարվեստականացման սկզբունքներով արժանի է ատենախոսության գլուխներից մեկում ընգծմանն ու ատենախոսի կողմից վերլուծությանը: Ստեղծագործությունը կարող էր համապատասխանել մասնավորապես 2-րդ՝ «Միջը, առասպելը և միստերիան նախատիպի գեղարվեստականացման սկզբնակետ» գլխի ենթագլուխներից մեկին:

Ատենախոսությունում կարելի էր նաև մի փոքր ավելի ընդգարձակ էջեր հատկացնել «Խմբապետ Շավարշը» ստեղծագործության վերլուծությանը: Այդ ստեղծագործությունը ամենայնուրևի հատուկ գործերից է, որում կարելի էր ավելի ծավալուն խոսել ստեղծագործությունում առկա նախատիպի


գեղարվեստականացման սկզբունքի մասին: Մի շարք գլուխների և ենթագլուխների դեպքում կան նախատիպի մասին գործեր, որոնք դուրս էին մնացել ատենախոսի ուշադրությունից: Այդ ստեղծագործությունները կարող էին ավելի հարստացնել ատենախոսությունը, ինչպես նաև նախատիպի գեղարվեստականացման սկզբունքը դարձնել ավելի ընդգրկուն:

Աշխատանքում առկա են տեխնիկական, սրբագրական բացթողումներ, հղումներում, օգտագործված գրականության ցանկում կան որոշ վրիպակներ, տեքստում՝ ձևաբանական, շարահյուսական սխալներ:

Ամփոփելով ասվածը՝ կարծում եմ, որ Արա Զարգարյանի «Նախատիպի գեղարվեստականացման սկզբունքները Եղիշե Չարենցի պոեզիայում» ատենախոսության մեջ կատարված մասնակի դիտարկումներն ու դիտողությունները ամեննին չեն նվազեցնում կատարված ծավալուն աշխատանքի գիտական արժեքը, քանի որ նկատված վրիպակներն ուղղելի են: Աշխատանքն ամբողջությամբ հաջողված է, և հեղինակն արժանի է Ժ. 01.04-«Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Դավիթ Գասպարյան**

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Բ. գ. դ. , պրոֆեսոր **Ղ. Գասպարյանի** ստորագրությունը  
հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական քննադատող Զակար Հակոբ  
Մուրադյան

